

ոչ մէկ ամպ կը նշմարուէր: Պայազիտ որ տակաւին բնաւ ձի հեծած չէր, մասնաւոր կերպով խնդրեց որ իրեն համար հանդարտ ձի մը տրուի: Զին իրապէս հանդարտ ըլլալը վկայեց, որովհետեւ հազիւ թէ գիւղին սահմանը անցած էինք, ետեւ իրարանցում մը լսելով, դարձայ և տեսայ որ թարգմանիս ձին խեղճ գիւղացիի մը խրճիթը մանկու վրայ է և թէ գիւղացին կը պայրանայ այս անկարգութեան համար: Երկու կողմէն ձիուն վրայ թափուած կատաղի հայհոյանքներէն համահնչելուն բախումէ մը վերջ տքացող անասունը անգամ մըն ալ համոզեցինք որ մեզի հետեւ, բայց ան շարունակ կը ջանար կանգ առնել և արածիլ: Երբեքս որ ես ձեռք առի զայն, և յետամտալին՝ ատենը անգամ մը տուածս հարուածներու ուժով կարող եղայ հեծելախումբը կարգի բերել:

Թանիրէն միկնելէ վերջ, նկարագրեց ժայռուտ կիրճէ մը անցանք որ կէս ժամուայ չափ կը մտնէ քաց, բլուրոտ հողմասի մը մէջ՝ այն միտքինակութեամբ, որուն յաճախ կը հանդիպի մարդ փոքր-միտք խորերը ճամբորդած միջոցին: Կարմիր քարուտ հողը, հոս հոն անտառի մացառներով ծածկուած և ծփծփուն բլուրները, գրեթէ առանց ունէ կանաչութեան, կը միանան լինելու Սահարա անապատի հիւսիսային տարածութեանց նման պատկեր մը, որքան որ կը յիշեմ այս վերջինը: Ծամբորդութեան ընթացքին, տեղ մը մուխթարը զուարթութեն գիտել տուաւ որ հոն էր՝ որ ոչ շատ առաջ Բլուրտերը սովոր էին իրենց գոհնուն ճամբան կտրել՝ շրջակայ բլուրներէն վրանին յարձակելով և ունեցածներն կողոպտելով: Եթէ չգիտադրէին կեանքերնին կը խնայուէր, այլապէս անմիջապէս կը մեռցնէին, առանց այլեայլի: Իրենց քացատրեցի որ այս՝ կովկասեան ցեղերու սովորութենէն աւելի լաւ էր, քանի որ անոնք ընտրելու առիթը չեն տար, այլ վարպետ նշանառուներ ըլլալով, հրացանով կը բսպանեն իրենց պահուած տեղէն և ապա անգղի մը պէս կը յարձակին որսին վրայ:

Թարգմանեց՝

ԱՐՏԱԽԱԶԴ՝ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Պէյրոք, 23 Նոյեմբեր 1942

(Շարունակել)

ԼԵԶՈՒՄԴԻՏԿԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ(°)

19. Ժամանակ եւ տեղ

Ահեկան, ամանակ, ժամանակ, ժամ, հրօտից, մարդաց, մահեկան, նաւասարդ, տրէ:

20. Երկիր եւ պետութիւն

ա) Երկրի մասեր. — Աշխարհ, ապատ, անապատ, ասպարէզ, աւան, աւանդ (մեծ գիւղ), դաշտ, դար, դարաւանդ, դեհ, դրախտ, խարակ, կոհակ, (չեռնակ), մարզ, շահաւտան, շատ (քաղաք), շեպ, շէն, ոտտան, ռահ, ոտտ, ոտտաստակ, սահման, վէմ:

բ) Պետական կազմ եւ պետութիւն. — ապատ, աղտիհ, Խոստապետ, ամբարակապետ, անդերծապետ, անջիման, ասպահապետ, ասպետ, բամբիշ, բանական, բարապան, բարապետ, բդեշխ, գահաւոր, գանձաւոր, գահիճ, գատաւոր, դարապան, դարապետ, դեհական, դեհապետ, դեսպան, դերանդերծապետ, գլնդակապետ, թագաւոր, իշխան, խաքան, հաղարապետ, հաղարաւոխտ, համարակար, հպատակ, հրբոմանատար, հրեշտակ, մարդպան, մարդպետ, նախարար, նահապետ, նուիրակ, շահանշահ, շահապ, շահապետ, շահախոտապետ, շապտան, տակառապետ, շարտաղար, ոստիկան, պահակ, պահակապան, պալիկ, պատգոստպան, պատմուճակ, պատուիրակ, պետ, պէշապալիկ, սակստան, անդերծապետ, սալար, սարապետ, սպասալար, սպարապետ, վասպուրական (ազնուական), վրդերկ, փուշտիպան, փուշտիպան սաղար:

գ) Վարչական գործարք եւ դիւանական գրութիւններ. — Անդարձ, ապահարզան, գահնամակ, դատ, դատախազ, դատաստան, խոստակդար, համիմաղ, հրովարտակ, մուրհակ, յետկար, նամակ, շահրմար, պայման, պատճէն, պատուէր, պատուիրան, պատուհաս, ջատագով, ոռճիկ, վկայ, վճիռ, փուրսիշ, օրէնք:

(°) Շարունակութիւն՝ մեծամուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործին Թ. Գլուխէն:

դ) Հարկեր. — Բաժ, բաշխ, սակ:

ե) Պատերազմ. — Ազատ, ապստամբ, ասպատակ, աւար, գումարտակ, գունդ, դարան, դէտ, դժպարտ, դրօշ, զինւոր, զօրք, թիրախ, թշնամի, լաշկար, հաշտութիւն, հէն, ճամբար, մարդիկ, մարձիկ, նախճիր, պայքար, պատերազմ, պարւանդ, պարկէն, պէշոպա, օսպմ, սպայ:

զ) Զէնքեր. — Աշտեայ, ասպար, բահլիկ, դաշնակ, դաստապան, զէնք, զրահ, լախտ, խիշտ, նիզակ, պատկան, պատկանդարան, պարս, օսղաւարտ, վարապան, վարդ, տապար, տէգ:

21. Սովորական կեանքի բառեր

Ազգ, ական, ահոկ, ամբարիշտ, ամբարտաւան, անաղարմ, անապակ, անարի, անգար, անդաճել, անդոհ, անոյշ, աշխատել, աշկարայ, աշոգի, ապալեպ, ապաստան, ապարասան, ապարթանել, ապենլապ, ապիրատ, ապսպարել, առատ, առոյգ, արագ, արգ (յարգ), արժան, արձակ, աւեր, բագ (բաժին), բազմել, բազմական, բաժանել, բաշխել, բաշխիշ, բարակ, բոյր, բոշխնել, գուման, գումարել, գունակ, գունդ, գուշակ, գուրգասար, դադ, դաժան, դամ, դժգոյն, դժխեմ, դժկամակ, դժկերպ, դժնդակ, դժնկայ, դժուար, դուժ, դարմիլ, դրուատ, դրժել, դրուժան, երամ, երաշխ, երաստ, զան, զինակար, զուր, զօրութիւն, զգոյշ, զեան, թշնամանք, թշուառ, թոշակ, ժաժ, ժահ, ժանդ, ժանդ, ժան, ժիր, ժոյժ, խամ, խոստանալ, խոստովանել, խորտակել, կերպ, կոյր, կոտակ, հաճել, հանգամանք, հանդարտ, հանդէս, հաւասար, հզօր, հնար, հրամայել, հրաման, հրաւէր, ճախր ճաշակ, ճապուկ, ճար, ճարակ, ճարպիկ, ճիմել, մանուկ, յուզել, նազել, նամ, նարմ, նիազ, նիշ, նիրհել, նկուն, նշան, նշանակ, նշմար, նպաստ, չամբուշ, շիփ, շնորհ, շտապ, ոյժ, ուխտ, պահել, պահակիր, պահապան, պաշտպան, պատասխանի, պատգամ, պատիր, պատիւ, պատշաճ, պատըսպարել, պատրաստ, պարար, պարարտ, պարզ, քուխտ, ոռշնական, սատակ, տոթ, սուգ, սպասել, սպուժել, ստամբակ, ստուար, սրսկել, վանել, վանգ, վատ, վատգոհար, վատթար, վատմիհր, վաւերական, վեհ, վէզ, (վէճ), վիճակ, վիշտ, վիրայել, վստահ, վրէպ, տակ (ծալք), տապ, տարազ, տոթ, փաշաման, փառք, փուտ, քանդել, քարշել, քէն:

22. Մակրայ եւ նմաններ

Անգամ, բովանդակ, գոյշ, համ, համակ, համայն, համբուն, համգունակ, հանգոյն, միշտ, յանգիման, յաւէժ, յաւէտ, յաւիտեան, յոյժ, նման, պէս, վասն, տակ, տակաւ, տար, փարգաստ:

Երբ ընթերցողը մի ակնարկ գցէ այս բոլոր փոխառութեանց վրայ եւ համեմատի բնիկ հայերէն 600 բառերի հետ տեսակ առ տեսակ, յայտնի կերպով կը տեսնէ թէ իրապէս ի՞նչ է իրանական ազդեցութիւնը եւ յատկապէս ո՞ր կողմից նա զօրեղ է: Բնութեան եւ նրա զօրութեանց մասին իրանական ազդեցութիւնը շատ տկար է. այս կէտում բնիկ հայերէնի 27 բառերի գէթ ունինք միայն 6 բառ, որոնցից ապախսար եւ նմանող յիշուած են իբրեւ գիտական տերմին կամ իբր օտար բառ. գրեթէ կրօնական բովանդակութիւն ունին ախսարք եւ խաւար եւ միայն երկու բառ կայ (արուսեակ եւ մանիկ), որ հայ լեզուին սեփականութիւն դարձած բառեր են:

Կրօնական բառերից բնիկ հայերէն ունինք միայն 9 բառ, իսկ իրանական փոխառութիւնները 29 հատ են, դեռ չհաշուելով այն 18 բառերը, որոնք զուտ պարսկական կրօնին են վերաբերում: Այսպէսով ուրեմն իրանական փոխառութիւնները հայերէնի զոնէ եռապատիկն են եւ ցոյց են տալիս թէ ինչքան մեծ է եղել իրանեանների ազդեցութիւնը մեր վրայ կրօնի տեսակետով: Աւելացնենք դեռ սրա վրայ այն աստուածների անունները՝ որոնք հեթանոսութեան ժամանակ պաշտուում էին մեր մէջ (Արամազդ, Անահիտ ևն) եւ որոնք զուտ իրանական փոխառութիւններ են:

Մարդու եւ մարմնի մասերի վերաբերեալ փոխառութիւնները 27 հատ են, որ բնիկ հայերէն բառերի գրեթէ կէսը լինելով (57) ցոյց են տալիս իրանական ազդեցութեան տկարութիւնը այս կէտում: Նոյնը պէտք է ասել նաեւ բժշկական բառերի մասին, որոնց թիւն է 13, բնիկ հայերէնը 12:

Կենդանիների վերաբերեալ բառերը բնիկ հայերէնում 45 են, իսկ փոխառութեանց մէջ 38. այս թիւը հայերէնի համեմատութեամբ թէև բաւական փոքր է, բայց պէտք է նկատի առնել որ յիշուած կենդանիներից զոնէ 14ը հայ երկրի բնիկ

կենդանիներ չեն. այսպէս ազդանակ (վիշապաձուկ), բեկ մեկոյ, խարբուզ, կապիկ, մուսկ, յովագ, նափակ, նմանգ, ռսպաղանգ, պապկայ, սիրամարգ, վագր, վիշապ, փիղ: Այս բառերը յիշուած են իրեն ռաբ հըր կիրնների կենդանիների անունն և նրանց գտնէ կէսը հայերէնի մէջ սովորական գործածութիւն չունի: Վագրը հնդկերու պացոց էլ ծանօթ էր. Ռիգվեդայի մէջ չէ յիշուած դեռ. վագրը Յունաստան եկաւ Ն. Ք. 300 թուին և շատ աւելի ուշ Հռոմ. Ն. Ք. II դարում յիշում է վարրո իբր հայերէնից անուշած բառ:

Այս տեսակէտով մօտենալով խնդրին՝ կը տեսնենք որ կենդանիների վերաբերեալ բառերի թիւը էլ աւելի կը նուազի և հազիւ բնիկ հայերէն բառերի կէսին կը հասնի:

Ընտանիքի և ազգակցութեան վերաբերեալ բառերը բնիկ հայերէնում 22 են, մինչդեռ իրանեան փոխառութեանց մէջ միայն մի բառ կայ (պապ), այն էլ ունի հարազատ հայերէն ձևը (հաւ), որ անշուշտ հաւ (թռչուն) բառի հետ չլիովութելու համար տեղի է տուել պապ ձևին: Ընդհակառակը բնիկական կազմութեան վերաբերմամբ հայերէնը շատ քիչ բառ ունի (3), իսկ իրանեան փոխառութիւնները շատ հարուստ են (22):

Շատ հետաքրքրական է երկրագործական բառերի հարցը: Այստեղ ընդհանուր գումարին մէջ բնիկ հայերէն բառերի թիւը (55) գրեթէ հաւասար է փոխառութեանց (59). բայց երբ մտնենք մանրամասնութեանց մէջ, այսպէս տունկի մասեր, երկրագործական գործիքներ և գործողութիւններ, կը տեսնենք որ իրանական ազգեցութիւնը (5 բառ) գրեթէ ոչինչ է հայերէնի վրայ, որ ունի 38 բառ: Ընդհակառակը իրանը մատակարարել է մեզ բազմատեսակ բոյսեր, որոնց թիւը 54 է՝ բնիկ հայկական 17ի դէմ: Լատիներէնում էլ պտղատու ծառերի անունները ընդհանրապէս փոխառեալ են: Եւ զարմանալին այն է որ այս բնիկ հայկական 17 բուսանուններից շատը ներկայացնում է վայրի բոյսեր կամ անտառային ծառեր, մինչդեռ իրանականների ստուար մասը մշակական բոյսեր են. այսպէս բրինձ, բուր, կաղամբ, կանեփ, կնիք, մաւ, շաղթում, պղպեղ, սոխ և վարունգ: Տարակոյս

չկայ որ այս բոյսերից մի քանիսը Պարսկաստանից անցել է Հայաստան. այսպէս են յատկապէս բրինձը, որ վրական աշխարհից անցել է մեր երկիրը, և բուրը՝ որ Մարաստանի յատուկ բոյս է և այնտեղից տարածուել է համայն աշխարհ: Բուսանունների մի մասն էլ ներկայացնում է այնպիսի բոյսեր, որոնք տաք գոտուն յատուկ լինելով՝ չեն կարող աճել Հայաստանում. հետեւաբար իրենց անունն հետ միասին Պարսկաստանի վրայով մտել են Հայաստան իրեն օտար բերք: Այս կարգին են պատկանում արմաւը, գարապղպեղը, գարինենիկը, նանբակը, նանդանը, մուսքը, նարգիլակը, պիսակը, և բրինձը: Կարեւոր է յիշատակել և այն՝ որ բուսանունների մի ստուար մասը ծաղիկներ են. ինչպէս համապարտ, հօրոս, մանուշակ, մօրոս, յամիկ, նարգես, շահապարտ, շաւաշարիւն, շուշան, սմնակ, և վարդ: Աւելի ուշ ժամանակից են մխակը, սմբուլը և նունուֆարը: Այնպէս որ հայերէն ծաղիկ անուն չկայ: Այս հանգամանքը ցոյց է տալիս որ ծաղկամշակութիւնը Պարսկաստանից մտած է Հայաստան: Հին ժամանակներից սկսած և մինչև այսօր էլ պարսիկները մեծ սիրով հետամուտ են ծաղկամշակութեան: Պարսկաստանում իւրաքանչիւր տուն մի պարտէզ է, միջին անխուսափելի աւազանով, որի չորս կողմը գոյնզգոյն ծաղիկներ են ցանուած: Ամէն երեկոյ ջուրը փողրակներով զալիս լցւում է աւազանի մէջ, որտեղից տան մշակը կամ աշխատաւորը կորիներով ոռոգում է ամբողջ ծաղկանոցը կամ պարտէզը: Նոյն իսկ պարսեզ բառը զուտ իրանական է, որի հին ձևն է գնդ. պաիբիդակեզ, կազմուած պաիբի շուրջ և դիզ փորել, շինել, դիզել բառերից և բուն նշանակում է չորս կողմը ցանկով պատած կամ հողէ թուփ շինած տեղ: Շատ նշանաւոր էին Աքեմենեան պարսիկ իշխանների պարտէզները եւ այն ժամանակից սկսած բառը նիւթի հետ տարածուել է դէպի արեւմուտք. այսպէս պարսկերէնից են փոխառուած ասուր. պարդիսու, ասոր. պարդիսա, երբ. պարդես, արաբ. ֆիրդաուս, յուն. պարադիսոս, լատ. պարադիսուս, իտալ. պարադիզո, ֆրանս. պարադի:

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Երևան-Երև)